ՍՈՎԵՏԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ 40 ՏԱՐԻՆ

Վրաստանը, որը նախկինում հանդիսանում էր ագրարային հետամնաց երկիր, սոցիալիստական շինարարության տարիներին վերածվեց առաջավոր ինդուստրիալ-ագրարային ռեսպուբլիկայի։

Մինչսովետական Վրաստանի արդյունաբերությունը կրում էր խիստ տնայնագործական բնույթ։ Սովետական իշխանությունը, մեր երկրում սոցիալիզմի շինարարության լենինյան պլանի համաձայն, ձեռնամուխ եղավ Վրաստանում ողջ ժողովրդական տնտեսության վերականգնմանն ու սոցիալիստական վերափոխությանը։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Վրաստանի աշխատավորները կարճ ժամկետում վերականգնեցին ժողովրդական տնտեսության, այդ թվում նաև արդյունաբերության, նախապատերազմյան մակարդակը։ Վերականգնման ժամանակաշրջանում գործարկվեցին նախկինում անգործության մատնված ձեռնարկությունները, ինչպես նաև արդյունաբերական մի շարք նոր ձեռնարկություններ։ Այդ շրջանի նորակառույցներից ամենախոշորը Զեմո-Ավչալայան հիդրոէլեկտրակայանն էր (ԶԱԳԷՍ)։

Սոցիալիստական ինդուստրիալիզացիայի տարիներին մեծ աշխատանք էր տարվում արդյունաբերական հին ձեռնարկությունների վերասարքավորման և նորերի շինարարության ծավալման ուղղությամբ։ 1927 թ. ԶԱԳԷՍ-ը ավեց արդյունաբերական հոսանք։ Զգալիորեն մեծացավ ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը։

Վրաստանում առաջին հնգամյակում ստեղծվեց սեփական ինդուստրիալ բազա՝ ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։ Զեստաֆոնիի երկաթաձուլվածքի գործարանը, Ռաթումիի նավթամշակման գործարանը, Կասպիի ցեմենտի գործարանը, բուրդ-մահուդեղենի, մետաքսագործական և տրիկոտաժի ֆաբրիկաները Թբիլիսիում, մետաքսագործական կոմբինատը Քութայիսիում և արդյունաբերական մյուս նոր ձեռնարկությունները ամբողջովին փոխեցին ինչպես արդյունաբերության կառուցվածքը, այնպես էլ ամբողջ ռեսպուբլիկայի դեմքը։

Երկրորդ հնգամյակում Վրաստանը վերածվեց ինդուստրիալ-ագրարային երկրի։ Ստեղծվեցին միութենական նշանակություն ունեցող արդյունաբերության նոր ճյուղեր։ Շահագործման հանձնվեցին Տկվարչելիի ու Ախալցխայի ածխահանքերը, «Ցենարոլիա» գործարանը Ավչալայում, Ավտոնորոգման գործարանը և կոշիկի խոշոր ֆաբրիկան Թբիլիսիում, կոֆեինի գործարանը Բաթումիում, շաքարի գործարանը Ագարայում։ Խիստ տեմպերով մարգանեցի հա-

---

Այս հոդվածը «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական կոլեգիայի խնդրանքով պատրաստված է Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ի. Ա. Ջավախիշվիլու անվան Պատմության ինստիտուտում։

նույթը։ Ընդարձակվեց էներգետիկ բազան, արդյունաբերական հոսանք տվեց Ռիոնի հիդրոէլեկտրակայանը։

Նախապատերազմյան տարիներին (1937—1941) գործարկվեցին լիտոպոնային գործարանը Քութայիսիում, Սամտրեդիայի դինաս գործարանը և Բեյակշիման Ջարրիկան Ակչալայում, Թբիլիսիի Տրիկոտաժ-մանվածքային կոմբինատը և մի շարք այլ ձեռնարկություններ։ Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի նախօրեին, Սովետական իշխանության տարիներին ստեղծված կամ հիմնովին վերակառուցված արդյունաբերական ձեռնարկությունները տալիս էին Վրաստանի արդյունաբերության ամբողջ արտադրանքի 80 տոկոսից ավելին։

Արդյունաբերությունը արագ թափով էր զարգանում նաև Վրաստանի ինքնավար շրջաններում։ Աբխազիայի էկոնոմիկայում առաջատար տեղ գրավեց ածխարդյունաբերությունը։ 20 տարվա ընթացքում (1921—1941) Աջարիայի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը աճեց 135 անգամ։

Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, մեր երկիրը հաջողությամբ անցում կատարեց դեպի խաղաղ շինարարությունը։ Ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման չորրորդ հնգամյա պլանի կատարման հիման վրա Վրաստանը զգալիորեն գերազանցեց արդյունաբերության նախապատերազմյան մակարդակը։ Չորրորդ հնգամյակի տարիներին գործարկվեցին Ստալինի անվան Անդրկովկասյան մետալուրգիական գործարանը, Հանքային սարքավորման Քութայիսիի գործարանը, Խրամի, Սուխումիի և Ջիտախևիի հիդրոէլեկտրակայանները։

Կոմունիստական պարտիան և Սովետական պետությունը հինգերորդ և վեցերորդ հնգամյակներում իրագործեցին մի շարք միջոցառումներ, որոնք զարկ տվին միութենական ռեսպուբլիկաների իրավունքների ընդլայնմանը ժողովրդական տնտեսության և հատկապես արդյունաբերության ղեկավարման գործում։ Արդյունաբերական մի շարք խոշոր ձեռնարկություններ միութենական ենթակայությունից հանձնվեցին ռեսպուբլիկայի տնօրինությանը։ Այդ շրջանում Վրաստանում կառուցված ամենախոշոր ձեռնարկություններից են հանդիսանում Օրջոնիկիձեի անվան ավտոմոբիլային գործարանը Քութայիսիում, Ռուսթավիի հանքային պարարտանյութերի արտադրության ազոտատուկի գործարանը և Գորիի տեքստիլ կոմբինատի առաջին հերթը։

Սովետական իշխանության տարիներին արդյունաբերությունը զարգանում էր ծանր ինդուստրիայի գերազանցող աճի պայմաններում։ Եթե 40 տարվա ընթացքում Վրաստանի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց 41 անգամ, ապա ծանր ինդուստրիայի ձեռնարկությունների համախառն արտադրանքը աճեց ավելի քան 80 անգամ։

Լուրջ փոփոխություններ տեղի ունեցան նաև արդյունաբերության տերիտորիալ տեղաբաշխման ուղղությամբ։ Արդյունաբերական հին շրջանների զարգացման հետ մեկտեղ առաջացան արդյունաբերական նոր կենտրոններ՝ Տկվարչելիում, Ախալցխայում, Ռուսթավիում, Գորիում, Կվախայում և այլուր։

Յոթնամյակի երկու տարվա ընթացքում (1959—1960) Վրաստանի արդյունաբերությունը համալրվեց նոր ձեռնարկություններով՝ հիմնականում քիմիական և էլեկտրատեխնիկական արդյունաբերության գծով։

Սովետական Միության արդյունաբերության զարգացման մեջ ձեռք բերած համաշխարհային-պատմական հաջողությունները Կոմունիստական պարտիա-

յին և Սովետական պետությանը թույլ տվեցին խնդիր դնել պահպանելով արտադրության միջոցների արտադրության աճի դերակայությունը, զգալիորեն ընդլայնել ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը։ Այդ խնդրի վճռմանը ակտիվորեն մասնակցում են նաև Վրաստանի արդյունաբերության աշխատողները։

* * *

Գյուղատնտեսության կոլեկտիվացման լենինյան քաղաքականության հաղթանակը արմատապես վերափոխեց վրացական գյուղը։ Մեծ Լենինի ցուցումները կենսագործելու նպատակով, Վրաստանի բոլշևիկները պայքարի կոչեցին ռեսպուբլիկայի աշխատավորներին՝ գյուղատնտեսության արագ վերականգնման և այն զարգացման սոցիալիստական ուղու վրա դնելու համար։

Սովետական իշխանության դեռևս առաջին տարիներին սկսվեցին ջրային տնտեսության շինարարության աշխատանքները։ Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Մաշվելիի, Սամուրձականի, Ալազանիի, Դոէս-Գրակալյան, Տիրիֆոնյան, Մուխրանսկիի և այլ ոռոգման ջրանցքները։ Ավարտվեց Վերին-Սամգորիի ոռոգման սիստեմի շինարարությունը, մեծ աշխատանք տարվեց Կոլխիդայի հարթավայրի չորացման ուղղությամբ։ Այս ամենը հնարավորություն տվեց շահագործման հանձնել հազարավոր հեկտար հողային նոր տարածություններ։

Գյուղատնտեսության վերակառուցումը կոլեկտիվացման ուղու վրա և գյուղատնտեսական աշխատանքների լայն մեքենայացումը նպաստեցին բանջարաբուծության և անասնապահության հնուց գոյություն ունեցող ճյուղերի զարգացմանը և նորերի ստեղծմանը, բոլոր կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության խիստ բարձրացմանը։ Վրաստանը վերածվեց գյուղատնտեսության բազմաբնագավառ մի ռեսպուբլիկայի։ Զգալիորեն զարգացան տեխնիկական և մերձարևադարձային կուլտուրաները։

Վրաստանը թեյի արտադրությամբ հանդիսանում է Սովետական Միության հիմնական շրջանը։ Նա տալիս է ՍՍՌՄ-ում արտադրվող թեյի արտադրանքի 95 տոկոսից ավելին։ 1960 թ. Վրաստանի թեյի պլանտացիաները կազմում էին 55 հազար հեկտար տարածություն 1921 թ. 1017 հեկտարի դիմաց։ 1960 թ. վրացական թեյագործները հավաքեցին և պետությանը վաճառեցին 157 հազար տոննա թեյի կանաչ տերև, կամ պլանը կատարեցին 114 տոկոսով։

Վրաստանում վաղուց ի վեր զբաղվել են խաղողագործությամբ ու գինեգործությամբ։ 1960 թ. խաղողի այգիների տարածությունը կազմել է 83 հազար հեկտար։ Վրաստանում մշակվում է 500-ից ավելի տարբեր տեսակի խաղող։ Գինու համաշխարհային մրցանակաբաշխություններում վրացական շատ գինիների շնորհվել են ոսկե և արծաթե մեդալներ։

Տեխնիկական կուլտուրաների տարածությունները 1913 թ. կազմում էին 20,7 հազար հեկտար, իսկ 1960 թ. Վրաստանում տեխնիկական կուլտուրաներով զբաղեցվել է 39,9 հազար հեկտար տարածություն, այդ թվում ծխախոտի պլանտացիաները կազմել են 14,5 հազար հեկտար։ Վրացական ծխախոտները հայտնի են իրենց բարձր որակով։ Ծխախոտի բերքի համարյա երկու երրորդը արտահանվում է Վրաստանի սահմաններից դուրս։

Սովետական իշխանության տարիներին մեծ զարգացում ունեցավ ցիտրուսային կուլտուրաների մշակությունը։ 1921 թ. ցիտրուսային կուլտուրաների

պլանտացիաների ընդհանուր տարածությունը 200 հեկտարից ավելի չէր, իսկ 1960 թ. այն հասավ 9 750 000 հեկտարի։ 1960 թ. պետության կողմից գնված ցիտրուսային պտուղների ամբողջ արտադրանքի 70 տոկոսը տվել է Աջարական ինքնավար ռեսպուբլիկան։

Վրաստանը մեծ հաջողությունների հասավ նաև պտղաբուծության զարգացման գործում։ 1921 թ. 30 հազար հեկտարի դիմաց 1960 թ. պտղատու այգիների զբաղեցրած տարածությունը կազմել է 102 հազար հեկտար։ 1960 թ. պետությունը Վրաստանում գնեց մինչև 81 հազար տոննա պտուղներ։

Վրաստանի Կոմունիստական պարտիան, հատկապես վերջին տարիներին, լուրջ ուշադրություն է դարձրել հացահատիկային կուլտուրաների վրա։ Ընդունված բերքատվության պլանի թերակատարմանը, մեկ հեկտարից ստացվող հացահատիկների միջին բերքն ավելացավ՝ 1953 թ. 8 ցենտներից 1960 թ. հասնելով մինչև 15 ցենտներ։

Սովետական իշխանության տարիներին զգալիորեն զարգացավ անասնապահությունը։ Վրաստանը մեծ հաջողությունների հասավ հանրային անասնապահության զարգացման գործում։ 1953 թ. համեմատությամբ 1960 թ. մսի արտադրանքը ավելացավ 119 տոկոսով, իսկ կաթինը՝ 150 տոկոսով։ 1960 թ. պետությանը վաճառվել է 63 հազար տոննա միս (պլանի 140 տոկոսը), 132 հազար տոննա կաթ (պլանի 108 տոկոսը) և 4650 տոննա բուրդ (պլանի 106 տոկոսը)։

Կոլտնտեսությունների խոշորացումը 1949—1951 թթ. նպաստավոր պայմաններ ստեղծեց ժամանակակից մեքենայական տեխնիկայի էլ ավելի լայն օգտագործման, հանրային տնտեսության զարգացման, կոլտնտեսային արտադրության մեջ ագրոբիոլոգիայի և առաջավոր փորձի նվաճումները ներդնելու համար։

Ահեցին կոլտնտեսությունների և կոլտնտեսականների եկամուտները։ Վրաստանի մի քանի շրջաններում բոլոր կոլտնտեսությունները միլիոնատերեր են։ Գյուղատնտեսության զարգացման մեջ ձեռք բերած հաջողությունների համար հազարից ավելի առաջավորներ արժանացել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչմանը։ Նրանցից երեքը՝ Պ. Սվանիձեն, Տ. Կուպունիան և Ա. Ռոդավան հանդիսանում են Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսներ։ Գյուղատնտեսության մի քանի հազար աշխատողներ պարգևատրված են Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով։

* * *

Սովետական հասարակության նյութական և կուլտուրական անընդհատ աճող պահանջների մաքսիմալ բավարարումը հանդիսանում է Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության բարձրագույն նպատակը։ Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում Վրաստանի էկոնոմիկայի ընդհանուր վերելքը ապահովեց աշխատավորների նյութական բարեկեցության զգալի աճ։ Աշխատավորների բարեկեցության վերելքը արտահայտվեց նրանց ռեալ եկամուտների աճով, բնակչության կոմունալ ու բուժական սպասարկման և աշխատավորների սոցիալական ապահովության բարելավումով։ Աշխատավորների ռեալ եկամուտները Սովետական իշխանության տարիներին ավելացան մոտավորապես երկու-երեք անգամ։ Տարեցտարի ավելացան կոմունալ և բնակարանային տնտեսության ծախսերը։

Ավելացավ քաղաքային բնակավայրերի քանակը և քաղաքային բնակչության թիվը։ 1921 թ. Վրաստանի քաղաքներում և քաղաքատիպ ավաններում բնակվում էր 475 հազար մարդ, իսկ 1960 թ. 34 քաղաքներում և քաղաքատիպ 37 ավաններում հաշվվում էր 1749,3 հազար բնակիչ։ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի բնակչության թիվը 700 հազարից ավելի է։ Վրաստանի սոցիալիստական նոր քաղաքներից ամենամեծը մետաղագործների քաղաք Ռուսթավին է, որտեղ ապրում է 70 հազար մարդ։

40 տարվա ընթացքում Վրաստանի քաղաքներում և բանվորական ավաններում պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից (առանց կոլտնտեսությունների) կառուցվել և շահագործման են հանձնվել 6 640 000 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ բնակելի տներ։

Պարտիայի և պետության անդուլ հոգատարությունը ցայտուն կերպով արտահայտվում է աշխատավորների սոցիալական ապահովությանը տրամադրվող պետական միջոցների անընդհատ աճով։ 1959 թվականին սոցիալական ապահովության վրա ծախսվել է 67,1 միլիոն ռուբլի (նոր դրամով)։ Տարեցտարի աճեց թոշակների ընդհանուր գումարը, ինչպես նաև՝ բազմազավակ մայրերին տրվող նպաստները։

Անընդհատ ավելացան առողջապահությանը և ժողովրդի ֆիզիկական դաստիարակությանը հատկացվող գումարները։ Վրացական ՍՍՌ բյուջեում 1959 թ. առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի ծախսերը կազմել են 72,3 միլիոն ռուբլի՝ 1932 թվականի 2,9 միլիոն ռուբլու դիմաց (նոր դրամով)։

Ժողովրդի նյութական բարեկեցության վերելքի ցուցանիշներից մեկն է հանդիսանում բանվորների և ծառայողների թվի աճը։ 1960 թ. Վրաստանի ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների և ծառայողների տարեկան միջին թիվը, նախնական տվյալներով, կազմում էր 927 հազար մարդ, 1921 թ. 89,5 հազարի դիմաց։

Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում ծաղկեց Վրաստանի սոցիալիստական կուլտուրան։ Վրաստանը համատարած գրագիտության երկիր է։ Բարձրագույն կրթության զարգացման գծով Վրաստանը առաջին տեղերից մեկն է գրավում Սովետական Միության մեջ։ Վրաստանում բնակչության ամեն մեկ հազարին հասնում է երեք և կես անգամ ավելի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ, քան Ֆրանսիայում և չորս անգամ ավելի, քան Անգլիայում։ 1960 թ. Վրաստանի 13 բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել են 56,3 հազար ուսանողներ (ներառյալ նաև հեռակայողները)։ Երիտասարդ սերնդի դաստիարակության բարելավման գործում կարևոր դեր խաղաց ժողովրդական կրթության սիստեմի վերակառուցումը։

Մինչսովետական Վրաստանում կար ընդամենը մի քանի գիտական հիմնարկություն։ Սովետական իշխանության հաղթանակից հետո ստեղծվեցին զանազան գիտա-հետազոտական հիմնարկություններ։ 1941 թ. փետրվարին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Վրացական ֆիլիալի բազայի վրա ստեղծվեց Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։ 1960 թվականին ռեսպուբլիկայում կար 145-ից ավելի գիտա-հետազոտական հիմնարկ։ Վրաստանի գիտական հիմնարկներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում հաշվվում էր ավելի քան 7 հազար գիտական աշխատող։

Գիտության համապատասխան բնագավառների զարգացմանը ակտիվորեն մասնակցում են վրացական մաթեմատիկական, ֆիզիոլոգիական, երկրա-

բանական դպրոցները, ինչպես նաև վրացական Ազգարանների դպրոցը, որոնց գլխավորում են փառաբանված գիտնականներ՝ Ն. Մուսխելիշվիլին, Ն. Բերիթաշվիլին, Ա. Ջանելիձեն, Ա. Ջիբորավան։

1959 թվականին ավարտվեց Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիկայի ինստիտուտի ատոմային փորձնական ռեակտորի շինարարությունը, որտեղ գիտական հետազոտություններ են տարվում միջուկային ֆիզիկայի ժամանակակից պրոբլեմների գծով։

Վրացական բազմաթիվ գիտնականների գիտական աշխատությունները արժանացել են Լենինյան և Ստալինյան մրցանակների։

Վրացական սովետական գրողները, որոնց շարքերը համալրվել են աշխատավորների ընդերքից դուրս եկած երիտասարդ հեղինակներով ու գրողների հին կադրերով, ակտիվորեն մասնակցել են երկրի սոցիալիստական վերափոխման համար մղվող պայքարին։ Վրացական սովետական գրողները ոչ միայն յուրացրել են վրացական բազմադարյան ինքնատիպ գրականության, ինչպես նաև համաշխարհային դասական գրականության տրադիցիաները, այլև իրենց լուման են մտցրել նորորակ՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական գրականության՝ սոցիալիստական ռեալիզմի գրականության ստեղծման գործում։

Վրացական պրոլետարական գրողներ Ս. Լեուլին, Ա. Միրցխուլավան (Մաշաշվիլի), Կ. Կալաձեն, Կ. Լորդկիպանիձեն, վրացական գրողների դեմոկրատական մասի ներկայացուցիչներ Գ. Տարիձեն, Գ. Գուլիշվիլին, Դ. Կլդիաշվիլին, դեկադենտական կողմնորոշում ունեցող զանազան խմբերից ու խմբակներից դուրս եկած Պ. Յաշվիլին, Տ. Տարիձեն, Վ. Գափրինդաշվիլին. Գ. Լեոնիձեն, Ռ. Գվետաձեն, Ս. Կլդիաշվիլին, Ա. Արաշելին, Ի. Գրիշաշվիլին, Ն. Լորդկիպանիձեն, Մ. Ջավախիշվիլին, Ս. Շանշիաշվիլին, Լ. Քիաչելին, ֆուտուրիստներից դուրս եկած գրողներ Ս. Ջիբոլանին, Ա. Բելիաշվիլին, Դ. Շենգելայան և վրացական գրականության մեջ տեղ գտած այլ ուղղությունների, խմբերի և խմբակների ներկայացուցիչներ Շ. Դաղիանին, Կ. Գամսախուրդիան, Պ. Կակաբաձեն, Ի. Մոսաշվիլին և ուրիշներ հանդիսանում են վրացական սովետական միասնական գրականության հիմնադիրներն ու ստեղծողները։

Վրացական սովետական գրականության այս առաջավոր ներկայացուցիչների, ինչպես նաև գրողների հետագա սերնդի՝ Ի. Աբաշիձեի, Գ. Աբաշիձեի, Ա. Գոմիաշվիլու, Ի. Նոնեշվիլու, Ռ. Մարգիանիի, Խ. Բերուլավայի և ուրիշների ստեղծագործություններում գեղարվեստորեն արտացոլված է սոցիալիստական շինարարությունը Վրաստանում, ցույց է տրված ժողովրդի հերոսական պայքարը հանուն սոցիալիզմի ու կոմունիզմի։ Բայց այս գլխավոր թեմայի հետ մեկտեղ վրացական գրողները աշխատել են նաև պատմական և այլ թեմաների վրա։ Վրացական սովետական գրականությունը կարևոր գեր է խաղացել ժողովրդի կոմունիստական դաստիարակության, նրա բարոյաբարոյական միասնության ամրապնդման, աշխատավորների լայն մասսաներին փառապանծ Կոմունիստական պարտիայի շուրջը համախմբելու գործում։

Ի. Աբաշիձեի, Գ. Աբաշիձեի, Խ. Բերուլավայի, Կ. Գամսախուրդիայի, Լ. Քիաչելիի, Գ. Լեոնիձեի, Ա. Միրցխուլավայի , Ի. Նոնեշվիլու, Գ. Տարիձեի և վրացական սովետական այլ գրողների բազմաթիվ ստեղծագործություններ

թարգմանվել են ռուսերեն լեզվով, Սովետական Միության մյուս ժողովուրդների և արտասահմանյան մի շարք լեզուներով։

Սովետական իշխանության տարիներին արագորեն աճել են Վրաստանի արվեստի բոլոր ճյուղերը։

Վրաստանի թատերական արվեստում սոցիալիստական ռեալիզմի հաղթանակը անխզելիորեն կապված է վրացական թատրոնի բարենորոգիչ ռեժիսյոր Կ. Մարջանաշվիլու, վրացական երաժշտության կլասիկ, կոմպոզիտոր Զ. Փալիաշվիլու, տաղանդավոր դիրիժյոր Ե. Միկելաձեի, հռչակված դերասաններ Վ. Արաշիձեի, Վ. Սարաջիշվիլու, Ս. Խաչվիլու, Ն. Կումսիաշվիլու, Ու. Չխեիձեի, Ա. Խորավայի, Ա. Վասաձեի, Վ. Անջափարիձեի. Տ. Ռամիշվաձեի, Վ. Զարուկիանիի, Պ. Ամիրանաշվիլու, Դ. Անդղուլաձեի, Վ. Գոձիաշվիլու, Ս. Զարարիաձեի և ուրիշների անունների հետ։

Վրացական կինոաշխատողները ստեղծել են մոտ 60 լիամետրաժ գեղարվեստական ֆիլմեր, որոնց մեծ մասը ընդհանուր հավանության է արժանացել սովետական հանդիսատեսի կողմից։ Մ. Չիաուրելու, Ն. Շենգալայայի, Ն. Վաշնաձեի, Մ. Գելովանու, Ա. Խորավայի, Վ. Անջափարիձեի, Ս. Բագաշվիլու և ուրիշների ստեղծագործությունները Վրաստանի կինոարվեստը սովետական կինոյի առաջին շարքերն են մղել։

Մեր սովետական դարաշրջանին արժանի շատ գործեր են ստեղծել Վրաստանի կիրառական արվեստի աշխատողները, թանդակագործներ Յա. Նիկոլաձեն, Կ. Մերարիշվիլին, Վ. Բոփուրիձեն, նկարիչներ Մ. Թոիձեն, Ու. Ջափարիձեն, Լ. Գուդիաշվիլին, Ս. Կորուլաձեն և ուրիշներ։

Վրացական սովետական կոմպոզիտորներ Դ. Արաքիշվիլին, Ա. Բալանչիվաձեն, Ռ. Լագիձեն, Ա. Մաչավարիանին, Օ. Տակտակիշվիլին, Դ. Թորաձեն, Ս. Ցինցաձեն և ուրիշներ ամուր կանգնելով ժողովրդայնության և սոցիալիստական ռեալիզմի դիրքերում, ստեղծել են տարբեր ժանրերի երաժշտական մի շարք սքանչելի ստեղծագործություններ։

Վրացական խորեոգրաֆիկ արվեստի զարգացման մասին են վկայում Թբիլիսիի Զ. Փալիաշվիլու անվան օպերայի ու բալետի բալետային խմբի, որը ղեկավարում է ՍՍՌՄ ժողովրդական դերասան, Լենինյան և Ստալինյան մրցանակների լաուրեատ Վ. Զարուկիանին և ՍՍՌՄ ժողովրդական դերասան, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ի. Սուխիշվիլու և Վրացական ՍՍՌ ժողովրդական դերասան, Ստալինյան մրցանակի լաուրեատ Ն. Ռամիշվիլու կողմից ղեկավարած Վրաստանի ժողովրդական պարի վաստակավոր անսամբլի մեծ հաջողությունները։

Մեծ թափ ստացավ ժողովրդական ստեղծագործությունը։ Գեղարվեստական ինքնագործունեության առաջավոր կոլեկտիվները կատարողական վարպետությամբ ետ չեն մնում պրոֆեսիոնալ անսամբլներից։

Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում կուլտուրայի զարգացման տեսակետից մեծ հաջողությունների են հասել Արխազական ու Աջարական ինքնավար ռեսպուբլիկաները և Հարավ-Օսեթական ավտոնոմ երկրամասը։

* * *

Ժողովուրդների լենինյան բարեկամությունը սոցիալիստական հասարակարգի շարժիչ ուժն է հանդիսանում, սոցիալիստական բոլոր ազգերի քաղաքական, տնտեսական և կուլտուրական աճի կարևորագույն աղբյուրը։

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության պատմական ակունքները սկիզբ են առնում դարերի խորքից։ Ադրբեջանցիների, հայերի ու վրացիների հեռավոր նախնիները, պաշտպանելով Անդրկովկասի ազատությունն ու անկախությունը, համատեղ պայքար են մղել օտարերկրյա դավթիչների դեմ։ Այդ համատեղ պայքարը, ինչպես նաև քաղաքական, տնտեսական ու կուլտուրական պատմականորեն ստեղծված կապերը մոտեցրել են անդրկովկասյան ժողովուրդներին։

Պարսկական ու թուրքական ասիմիլյատորների դեմ անհավասար պայքարում արյունաքամ լինելով, Ադրբեջանը, Հայաստանն ու Վրաստանը դեռ հնուց ձգտում էին բարեկամական կապեր հաստատել ռուս ժողովրդի հետ։ XIX դարի առաջին կեսում Անդրկովկասը միացավ Ռուսաստանին։ Չնայած ցարական ինքնակալության ռուսացման քաղաքականությանը, Անդրկովկասի համար Ռուսաստանին միանալը առաջադիմական մեծ նշանակություն ունեցավ։

Ռուսական ռևոլյուցիոն շարժման պրոլետարական շրջանում, ռուս բանվոր դասակարգը իր շուրջը համախմբեց նախկին Ռուսական կայսրության բոլոր ազգերի աշխատավորներին և նրանց պայքարի հանեց ցարիզմի ու բուրժուազիայի դեմ։

Հաշվի առնելով Անդրկովկասի բանվոր դասակարգի համար բնորոշ բազմազգայնությունը, Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, որոնք ստեղծվել էին ինտերնացիոնալ սկզբունքով, հսկայական ուշադրություն էին դարձնում պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով աշխատավորներին դաստիարակելու վրա։ Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է Անդրկովկասի պարտիական կազմակերպությունների մեծ աշխատանքը աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակման և համախմբման գործում, նրանց բերելով որպես օրինակ ՌՍԴՐՊ բոլոր մյուս կազմակերպությունների համար։

1918—1921 թթ. օտարերկրյա ինտերվենտները և նրանց անդրկովկասյան վարձկաններ մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթականները փորձում էին աշխատավորների գիտակցությունը թունավորել բուրժուական նացիոնալիզմով և Անդրկովկասում ստեղծել ազգային փոխադարձ ատելության մթնոլորտ։ Մենշևիկները, մուսավաթականներն ու դաշնակները գերազանցեցին նույնիսկ ցարական կառավարությանը իրենց նացիոնալիստական-շովինիստական քաղաքականությամբ։ 1921 թվականի հունիսի 6-ին Վրաստանի Կոմունիստական պարտիայի Թբիլիսիի կազմակերպության ընդհանուր ժողովում Ի. Վ. Ստալինը ասաց. «Եղբայրական վստահության հին կապերը խզված են կամ, համենայն դեպս, սաստիկ թուլացել են։ Ըստ երևույթին, ակներևորեն, նացիոնալիստական կառավարությունների երեք տարվա գոյությունը Վրաստանում (մենշևիկներ), Ադրբեջանում (մուսավաթականներ), Հայաստանում (դաշնակներ) դուր չի անցել» (Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 106—107)։

Վ. Ի. Լենինը պահանջում էր Կովկասի կոմունիստներից ստեղծել «ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[1]։

Վ. Ի. Լենինը Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման նախաձեռնողն էր. ֆեդերացիա, որի կոչումն էր կոմունիստական շինարարության խնդիրները

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402։

կենսագործելու նպատակով միավորել Անդրկովկասի ժողովուրդների բաղաքական և տնտեսական ջանքերը։ Անդրկովկասյան Ֆեդերացիան (1922—1936 թթ.) դարձավ ազգային խաղաղության օրդան։ Նա մեծ դեր խաղաց Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը արտահայտվում է քաղաքների, կոլտնտեսությունների, սովխոզների, արդյունաբերական տրանսպորտի ու շինարարական ձեռնարկությունների միջև էլ ավելի ուժեղացող սոցիալիստական մրցությամբ։

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը կոփվում է նրանց համատեղ պայքարում հանուն կուլտուրական ռևոլյուցիայի, հանուն Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ծաղկման։ Կուլտուրական սերտ կապերը զարկ տվին ադրբեջանական, հայկական ու վրացական սոցիալիստական ազգերի կուլտուրաների փոխադարձ հարստացմանը։

Սովետական իշխանության հաղթանակի առաջին իսկ տարիներից Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ժողովուրդները միասնական ճակատ ստեղծեցին թշնամիներին ռազմական ու դիվանագիտական հակահարված տալու համար։ Մեր բազմազգ Հայրենիքի ժողովուրդների բարեկամության ամրության բազմակողմանի դաժան փորձություն հանդիսացավ Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմը։ Անդրկովկասի ժողովուրդները, ինչպես նաև սովետական մյուս ժողովուրդները, պատվով կատարեցին իրենց պարտքը Հայրենիքի հանդեպ։

Գերմանա-ֆաշիստական զավթիչների և նրանց հանցակիցների դեմ պայքարում ռուս և եղբայրական մյուս ժողովուրդների հետ միասին աչքի ընկան վրաց, հայ ու ադրբեջանական ժողովուրդները։

Հայրենական պատերազմի սկզբնական շրջանում, երբ Գերմանիայի և նրա արբանյակների զորքերը օկուպացրել էին Սովետական Միության տերիտորիայի մեծ մասը, Ադրբեջանը, Հայաստանն ու Վրաստանը վերածվեցին Սովետական Ռազմական ուժերի զինանոցի։

Հետպատերազմյան շրջանում էլ ավելի ամրացան անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության անբակտելի կապերը։ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների միջև հաստատվեց տնտեսական սերտ համագործակցություն։

* * *

ՍՍՌՄ յոթնամյա պլանում մարմնավորված են Կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի գլխավոր խնդիրները։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանում մարմնավորվեց մեր պարտիայի լենինյան ազգային քաղաքականությունը՝ բոլոր միութենական ռեսպուբլիկաների էկոնոմիկայի և կուլտուրայի հետագա բազմակողմանի զարգացման հարցում։

Յոթնամյակում կապիտալ ներդրումները Վրացական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ պետք է կազմեն 16.8 միլիարդ ռուբլի, որը 45 տոկոսով ավելի է նախորդ յոթնամյակի (1952—1958) կապիտալ ներդրումներից։ Այդ գումարի կեսից ավելին կներդրվի արդյունաբերության մեջ, որը զարգանալու է երկու ուղղությամբ։ Մի կողմից կընդարձակվեն այն բնագավառները,

որոնք Սովետական Միության տնտեսական շրջանների միջև աշխատանքի տերիտորիալ բաժանման մեջ որոշում են Վրաստանի մասնագիտացման պրոֆիլը։ Այդ բնագավառների թվին են պատկանում մարդանեցի, մեքենաշինական և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, ոչ հանքային հանածոների հանույթն ու մշակումը, սև մետաղագործությունը, մերձարևադարձային հողագործությունը, խաղողագործությունն ու գինեգործությունը, պտղաբուծությունը և այլ բնագավառներ, ինչպես նաև արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրանքի արտադրության այլ տեսակներ։ Մյուս կողմից, յոթնամյակի ընթացքում կպարգանան արդյունաբերության այն ճյուղերը, որոնք նպաստում են վրացական էկոնոմիական շրջանի կոմպլեքսային զարգացմանը։ Այդ բնագավառներն են՝ վառելիք-էներգետիկական տրնտեսությունը, շինանյութերի արդյունաբերությունը, հանքային պարարտանյութերի արտադրությունը, արդյունաբերական և մթերային ապրանքների արտադրությունը, մթերատու անասնապահությունը, բանջարաուծությունը և այլ բնագավառներ։

Յոթնամյակի ընթացքում Վրաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը կաճի համարյա 75 տոկոսով, այդ թվում «Ա» խմբի գծով՝ 87 տոկոսով, իսկ «Բ» խմբի գծով՝ 57 տոկոսով։

1965 թ. արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրությունը 1958 թ. համեմատությամբ պետք է ավելանա հետևյալ չափերով. էլեկտրաէներգիան՝ 2,3 անգամ, հանքային պարարտանյութերը՝ 2,2 անգամ, մետաղահատ հաստոցները՝ 2,5 անգամ, բեռնատար ավտոմոբիլները՝ 2,5 անգամ, տրակտորները՝ 2 անգամ, մագիստրալ-էլեկտրաքարշիչները 9,4 անգամ, բամբակե գործվածքները՝ 1,8 անգամ, բրդե գործվածքները՝ 1,6 անգամ, խաղողի գինին՝ 2,5 անգամ, բնական թելը՝ 1,6 անգամ։

Արագ թափով պետք է զարգանա քիմիական արդյունաբերությունը, մարդանեցի հալույթի արտադրությունը, էլեկտրաէներգիայի մշակումը, մեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, սպասարաշինությունն ու մետաղամշակումը։

Յոթնամյակի ընթացքում Վրաստանի քիմիական արդյունաբերության արտադրանքը կաճի ավելի քան 6 անգամ։ Այդ կիրագործվի քիմիական արդյունաբերության բոլոր գոյություն ունեցող և նոր կառուցվող ձեռնարկությունների ընդլայնմամբ։ Պետք է կառուցվի սինթետիկ մանրաթելի գործարան։ Ադրբեջանից՝ Ղարադաղ-Թրիլիսի գազամուղով ստացվող բնական վառելիք գազը կօգտագործվի նաև որպես հումք քիմիական արդյունաբերության համար։

1965 թ. կմշակվի մոտ 7 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա։ Յոթնամյակում Ինգուրա գետի վրա կսկսվի Վրաստանի խոշորագույն հիդրոկայանի կառուցումը։

Մեքենաշինության համախառն արտադրանքը կեռապատկվի։ Առաջին անգամ Սովետական Միության մեջ Վրաստանը կյուրացնի տրակտորների և լեռնային շրջաններում աշխատելու համար ամրարձիչ գյուղատնտեսական գործիքների արտադրությունը։ Քութայիսիի ավտոմոբիլային գործարանը կյուրացնի այգե-բանջարանոցային փոքրաչափ տրակտորների թողարկումը։

Համարյա 10 անգամ կավելանա էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի բացթողումը։ Վրաստանում կկարգավորվի մեծ, միջին և

փոքր հզորություն ունեցող էլեկտրաշարժիչների, էլեկտրահոսակցական սարքավորման, էլեկտրական վիրաբուժական մեքենաների, էլեկտրամեկուսացնող նյութերի, կարելային շինվածքների, ավտոմատացման սարքերի ու միջոցների և այլ արտադրանքի արտադրությունը։

Յոթնամյակում սպասքաշինական գործարանների արտադրանքի ծավալը կավելանա 33 անգամ։ Սպասքաշինական ձեռնարկությունները կարտադրեն սպասքներ, ավտոմատացման միջոցներ և հաշվային մեքենաներ։

Յոթնամյա պլանը նախատեսում է Վրաստանի արդյունաբերության նաև բոլոր մյուս բնագավառների զարգացումը։

Յոթնամյա պլանում կարևոր տեղ է հատկացվում Վրաստանի բազմաճյուղ գյուղատնտեսության զարգացմանը, հատկապես նրա այնպիսի բնագավառների, ինչպիսին է թեյագործությունը, ցիտրուսաբուծությունը, գինեգործությունը, պտղաբուծությունը և ծխախոտագործությունը, որոնք համամիութենական նշանակություն ունեն։

1965 թ. թեյի պլանտացիաների տարածությունները կկազմեն 70 հազար հեկտարից ավելի, ցիտրուսայիններինը՝ 13 հազար հեկտար, խաղողի այգիները՝ 120 հազար հեկտար, պտղատու ծառերը՝ 140 հազար հեկտար տարածություն։ Կանաչ թեյի հավաքը պետք է կազմի 200 հազար տոննա, ցիտրուսային պտուղներինը՝ մոտ 1 միլիարդ հատ, խաղողինը՝ մինչև 300 հազար տոննա, մրգերինը՝ մինչև 560 հազար տոննա և ծխախոտինը՝ 20 հազար տոննա։

Ճիշտ է, Վրաստանը մասնագիտանում է տեխնիկական և մերձարևադարձային կուլտուրաների արտադրության ուղղությամբ, բայց դրա հետ մեկտեղ լուրջ ուշադրություն է դարձվում հացահատիկային կուլտուրաների և հատկապես եգիպտացորենի զարգացման վրա։ Ինչպես նշեց 1961 թվականի ՍՄԿՊ Հունվարյան պլենումը, 1961—1965 թթ. Վրաստանի գյուղատնտեսության աշխատավորների առաջ խնդիր է դրված ավելացնել եգիպտացորենի ցանքերը և բարձրացնել բերքատվությունը։ 1961 թ. Վրաստանը պետությանը պետք է վաճառի 10 միլիոն փութ հացահատիկ, իսկ 1965 թ.՝ 15 միլիոն փութ։ Վրաստանի կոլտնտեսականների պատրաստակամությունը պայքարելու այդ խնդրի կատարման համար՝ այն ռեալ է դարձնում։

Յոթնամյակի ընթացքում կավելանա անասունների գլխաքանակը և կբարձրանա անասնապահության արդյունավետությունը։ Անասնապահական մթերքների արտադրությունը կավելանա 2—2,5 անգամ։ Յոթնամյակի վերջում Վրաստանը պետք է իրեն ապահովի կաթի ու մսի մթերքների սեփական արտադրությամբ։ Նախատեսվում է անասնապահական բոլոր մթերքների ինքնարժեքի խիստ իջեցում։

Վերջնականապես կավարտվի Վրաստանի կոլտնտեսությունների և սովխոզների էլեկտրիֆիկացիան։

Յոթնամյա պլանը նախատեսում է կուլտուրայի բոլոր բնագավառների զարգացում։ Կկազմակերպվեն գիտա-հետազոտական նոր ինստիտուտներ, հանրակրթական դպրոցներ (ինտերնատ-դպրոցների թիվը կմեծանա 14 անգամ) և կուլտուր-լուսավորական հիմնարկություններ։

Վրաստանի Գիտությունների ակադեմիայի գիտա-հետազոտական ինստիտուտները պետք է մշակեն գիտության տարբեր բնագավառների ավելի քան

200 պրոբլեմ։ Դրանցից շատերը մշակվում են միութենական այլ ռեսպուբլիկաների գիտական հիմնարկների հետ համատեղ։

Յոթնամյակում լուրջ տեղ է տրված գրականության և արվեստի զարգացման հարցերին։ Նախատեսվում է գրքի հրատարակության հետագա զարգացում։ Կկառուցվեն նոր տպարաններ։

Յոթնամյակում կրարելավվի աշխատավորների կոմունալ, բուժական և առևտրական սպասարկումը։ Շարք կմտնեն ընդհանուր մակերեսով 7,7 միլիոն քառակուսի մետր տարածություն ունեցող բնակելի շենքեր։ Նախատեսվում է շրջանային 21 հիվանդանոցների կառուցում։ Սանատորիաներում կավելանան մահճակալների թիվը։ Վրաստանի առևտրական հիմնարկների ապրանքաշրջանառությունը կավելանա 57 տոկոսով։

Յոթնամյակի ընթացքում Վրաստանի աշխատավորների ռեալ եկամուտները կավելանան ավելի քան 40 տոկոսով։

Վրաստանի ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը նախատեսնում է Աբխազիայի, Աջարիայի և Հարավային Օսեթիայի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառների և կուլտուրայի զարգացում։

Սրանք են Վրաստանի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման հեռանկարները յոթնամյակում։

ՍՄԿՊ XXI համագումարում Ն. Ս. Խրուշչովը ասաց.

«Սովետական ժողովուրդը սոցիալիստական շինարարության ընթացքում աշխատանքային հերոսության հրաշքներ ցուցաբերեց։ Տարակույս չի կարող լինել, որ յոթնամյա պլանը առաջ կբերի աշխատանքային խանդավառության նոր ալիք, ծնունդ կտա մեր երկրում կոմունիստական շինարարության հոյակապ ծրագրի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համաժողովրդական սոցիալիստական մրցության նոր ձևերի» (ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերի մասին։ Զեկուցում ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարում, 1959 թ. հունվարի 27-ին, էջ 171)։

Յոթնամյակի մեծ նպատակները ծնել են աշխատավորների մեծ եռանդ։ Ամբողջ երկրով մեկ ծավալվել է սոցիալիստական մրցություն՝ յոթնամյակը ժամկետից շուտ կատարելու համար։ Յոթնամյա պլանի վիթխարի խնդիրները հաջողությամբ կենսագործելու հաստատ երաշխիքը սովետական ժողովրդի դյուցազնական երթն է։